Գործ ԵԴ/61170/02/22

ՈՐՈՇՈՒՄ

հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու մասին

08.06.2023թ. **ք.Երևան**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Դատավոր՝ Էդ. Ամալյանս ծանոթանալով՝ «Նիկ Դավ Գրուպ» ԲԲ ընկերության ներկայացուցիչ՝ Միեր Շահնազարյանի կողմից ներկայացված հայցադիմումին ընդդեմ պատասխանող՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 21.10.2022թ.-ին կայացրած որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին՝

ՊԱՐԶԵՑԻ

«Նիկ Դավ Գրուպ» ԲԲ ընկերության ներկայացուցիչ՝ Միեր Շահնազարյանը 22.11.2022թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան (այսուհետ նաև՝ Դատարան):

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /Դատավոր՝ Զ. Նախշքարյան/ 28.11.2022թ.-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձրել է հայցվորին:

Հայցվորի ներկայացուցիչը 18.04.2023թ.-ին կրկին ներկայացրել է հայցադիմումը, որը մակագրվել է Դատավոր Մ. Ստեփանյանին, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի /Դատավոր՝ Մ. Ստեփանյանի/ 03.05.2023թ.-ի որոշմամբ հայցադիմումը կրկին վերադարձրել է հայցվորին:

Հայցվորը վերացրել է հայցադիմումի թերությունները և 24.05.2023թ-ին հայցադիմումը կրկին ներկայացրել է դատարան: Հայցադիմումը 24.05.2023թ-ին մակագրվել է Դատավոր Էդ. Ամալյանին, Դատավորի աշխատակազմին է հանձնվել 05.06.2023թ-ին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասին համաձայն՝ հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 10-12-րդ կետերով սահմանված դեպքերի: Եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Հայցվորի կողմից ներկայացված հայցադիմումում պահպանվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-125-րդ հոդվածների և 27.2-րդ գլխի [illegible] պահանջները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կանոնակարգում է

որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածների 27.2-րդ գլխի իրավական կարգավորումների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայցադիմումն ընդունել վարույթ:

Պատասխանողից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված ապացույցները՝ այն է սույն գործով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Հայցադիմումը համարվում է դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Էդ. Ամալյան**